*անխտիր: Ոմանք, ինչպէս Ազգային Պատուիրակութիւնը, չչմած հարւածի ծանրութիւնից, անտրտունջ ու լուռ քաշւեցին քաղաքական ասպարէզից: Ուրիշներ—Հ. Հ. Պատուիրակութիւնը բողոքեց ցասումով՝ պետութիւններին և Ազգերի Լիգային՝ յայտարարելով, որ Լօզանով հայկական հարցը չի փակւում, որ հայկական պահանջները շարունակում են մնալ իրենց ուժի մէջ, որ հայ ժողովուրդը կը շարունակէ պայքարել մինչև իր արդար դատի վերջնական լուծումը: Այս ներհակ մտայնութիւնը լայնօրէն թափանցեց և ժողովրդական զանգւածների մէջ, որը նոյնպէս բաժանւեց վհատւածների ու պայքարողների: Եւ, սակայն, քանի ժամանակը անցնում է, այնքան ակներև է դառնում, որ Լօզանը լոկ հանգրւան է հայկական հարցի զարգացման ճանապարհին և որ անհրաժեշտօրէն պիտի գայ մի նոր Սեւր, որ վերջնականօրէն պիտի լուծէ հայկական խնդիրը՝ կեանքի կոչելով Անկախ և Միացեալ Հայաստանը — Հայաստանի Հանրապետութիւնը:*

---